ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 սեպտեմբերի 2023 թվականի № 247-Ա

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 226-րդ հոդվածի, հիմք ընդունելով «Փըրֆեքթ Աուդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Նոր Հաճնի Մեծն Մուրադի անվան № 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2023 թվականի մայիսի 3-ից հունիսի 25-ը ներառյալ իրականացված աուդիտի արդյունքները և *Հ. Պետրոսյանի*՝ 2023 թվականի սեպտեմբերի 1-ի № 190/23 գրավոր բացատրությունը՝ **որոշում եմ.**

1. Աշխատանքային կարգապահությունը խախտելու՝ աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Նոր Հաճնի Մեծն Մուրադի անվան № 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն *Հայկանուշ Վարդգեսի Պետրոսյանի* նկատմամբ կիրառել ***«խիստ նկատողություն»*** կարգապահական տույժը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2023 թվականի սեպտեմբերի 05
ք. Հրազդան